

րերուն համար: Մեծ ըմբիշներ տուած է այդ գեղը Պրուսայի տարեկան մրցանքներուն մէջ առաջնութեան արժանացող: Բացառաբար հողագործ, ինչպէս սկսած են հաւանաբար ըլլալով միւս գիւղերը, երբ ժէ-րդ դարուն Հայաստանէն փախած հաստատուեցան լիճին հարաւն ու հիւսիսը ու քիչ մը աւելի անդին, լեռնանիստ ծմակներու խորը, աշխարհէն մոռցուելու յայտ ու հասկնալի մտադրութեամբ մը: Բայց մինչ միւս գիւղերը քալած են ժամանակին հետ, արտերը վերածելով պարտէզի, այգիի, ձիթենիի, մարմարեայ գիւղը յամառած է իր աւանդութեանց մնալ փաթթուած ու թիզ մը արտ -այս բառը անոնց բերնէն կը զգայի, որ պատկառոտ ծանրութեամբ մը կ'ելլէր, կրօնական երանգով գրեթէ- չէ զոհած անիկա թթենիին, որ որդերուն ծառն է ու Նոյի տունկին, որ գինովները կը ծնի, որոնք՝ հացի բոյսեր չեն, ինչպէս կը վրձնէին ծերերը, երբ կը դատէին իրենց բերքը: Իմ հոն աշխատած ատեն, գեղացին անհող էր գրեթէ, վասնզի դաշտի ճահիճը վրայէ վրայ եօթը տարի է ահա կալանաւոր կը պահէր արտերը, քիչ մը առատ անձրեւներէն անձամբ՝ տարածուելով դէպի մշակելի, մշակուած հողերը, ամէնէն արգասաբեր մասը գեղին անդաստաններուն: Այն տարին, տէրտէրին ու ծերերուն հաւաստիքովը վախճանն էր սովի եօթը տարիներուն, քանի որ Մննդոց գիրքին պատմութիւնը զուր տեղը չէր, որ ստեղծած էր փարաւոններու երազներ: Գեղին տարեգրութիւնն ալ -բերանացի անշուշտ, քանի որ գիրը անծանօթ իրողութիւն մըն էր ներքին կեանքի դէպքերուն շուրջ- հաւատարիմ էր այդ ակնկալութեանց: Ճահիճը, այդ աշնան կը թուէր սմբած, արտերուն տեղ չքեղ եղէգնուտ մը փայլեցնելով: Կը հասկնաք խոնաւութիւնը, գարշահոտութիւնը, օձերը, մալարիային բիւրաթուիչ մարմինը, ըսել կ'ուզեմ պարարտ մթեղներու ամպերը, տգրուկները, աղուէսն ու գայլը, թռչունները, որոնք անոր եղէգներուն հանգոյցին մէջ բոյն կը զարնեն... ըլլային տպաւորիչ, գրաւիչ օտարներուն համար, որոնք անպայման կ'ազդուէին մռայլ այդ